Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 19-ի N 493 - Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Պատասխանատու կատարողները | Կատարման ժամկետը | Ֆինանսա-վորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ (ՀԱՄՀ) հիմնական գրասենյակ** | | | | | |
| 1.1. | ՀԱՄՀ-ի ընդհանուր և ծրագրային գոր-ծունեության պլանավորում, կազմա-կերպում, իրականացում և կառավարում | ՀԱՄՀ-ի բնականոն գործունեության ապահովում<br>ՀԱՄՀ-ի հոգաբարձուների խորհրդի հետ արդյու-նավետ հարաբերությունների և շարունակական հաղորդակցության ապահովում<br>ՀԱՄՀ-ին կից մասնագիտական աշխատանքային հանձնաժողովների ստեղծում և աշխատանքների արդյունավետ ապահովում | ՀԱՄՀ Հիմնական գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| **2. Զբոսաշրջություն** | | | | | |
| 2.1. | Հայաստանում զբոսաշրջության ռազ-մավարական զարգացման հայեցա- | զբոսաշրջության խթանման միջոցառումներ ծրագրի հիմնադրույթների մշակում իրավիճակային | ՀԱՄՀ զբոսաշրջության | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | կարգային նպատակներին համապատասխան զբոսաշրջության խթանման միջոցառումների ծրագրի հիմնադրույթների և միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | վերլուծության, միջազգային փորձի ուսումնասիրության և շահառուների ներգրավմամբ հանրային քննարկումների հիման վրա<br>զբոսաշրջության խթանման ծրագրով նախատեսված միջոցառումների ներդրման մեկնարկի ապահովում | գրասենյակ | | բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 2.2. | Զբոսաշրջության խթանում | Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորման և միջազգային շուկաներում ներկայացման ու ամրապնդման ապահովում՝ համապատասխան շահառուների ներգրավմամբ<br>մասնավորապես՝<br>առնվազն երկու միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին, տոնավաճառներին և համաժողովներին մասնակցության ապահովում,<br>Հայաստանի զբոսաշրջության խթանմանը նպաստող գովազդատեղեկատվական փաթեթների մշակում՝ միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների հետ համագործակցությամբ (CNN, Euronews, BBC) և նրա ներդրումն ապահովող միջոցառումների իրականացում<br>առնվազն երկու օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների և օտարերկրյա լրագրողների ճանաչողաուսուցողական առնվազն երկու այցի կազմակերպում և իրականացում<br>զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնների գործունեության հայեցակարգային դրույթների մշակում և ծրագրի ներդրման աշխատանքների | ՀԱՄՀ զբոսաշրջության գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | պլանավորում, կազմակերպում և իրականացում Հայաստանի զբոսաշրջության նոր վերկայքի www.armenia.travel հայեցակարգի մշակում և նրա ներդրման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | | | |
| 2.3. | Հայաստան միջազգային այցելու-թյունների վիճակագրական հետա-զոտության իրականացում | Հայաստան միջազգային այցելությունների վիճակագրական հետազոտությանն աջակցություն | ՀԱՄՀ զբոսաշրջության գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| **3.** | **«Տաթևի վերածնունդ»** | | | | |
| 3.1. | Տաթևի վանական համալիրի վերա-կանգնման աշխատանքների պլանա-վորում, կազմակերպում և կոորդի-նացում՝ մասնավոր-պետական հա-մագործակցության շրջանակներում | պատմական հուշարձանի պահպանումն ու վերա-կանգնումն ապահովող միջոցառումների ներդրման (վերականգնման աշխատանքների) պլանավորում, կազմակերպում և կոորդինացում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ<br>ձիթհանի՝ որպես թանգարան, շահագործման աշխա-տանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | ՀԱՄՀ Տաթևի վերածնունդ ծրագրի գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 3.2 | Տաթև գյուղական համայնքի համայն-քային զարգացման ծրագրի մշակում՝ մասնավոր-պետական համագործակ-ցության շրջանակներում և ծրագրի իրականացումն ապահովող միջոցա-ռումների պլանավորում, կազմակեր-պում ու կոորդինացում | Տաթև գյուղական համայնքի կարիքների վրա հիմնված Տաթև գյուղի երկարաժամկետ համայնքային զարգացման ծրագիր՝ հիմնված տեղական կարիքների և համայնքային ունակությունների զարգացման վրա<br>ծրագրով նախատեսված միջոցառումների իրակա-նացման համար ֆինանսավորման միջոցների | ՀԱՄՀ Տաթևի վերածնունդ ծրագրի գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | առնվազն 20% - ի ապահովում<br>ծրագրով նախատեսված միջոցառումների իրակա-նացման համար անհրաժեշտ ֆոնդահայթայթում<br>ծրագրով նախատեսված միջոցառումներից առնվազն 1-ի մեկնարկ | | | |
| 3.3. | «Տաթևի վերածնունդ» ծրագրի բրեն-դի առաջմղման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում՝ մասնավոր-պետական համագործակցության սկզբունքի շրջանակներում | «Տաթևի վերածնունդ» ծրագրի ճանաչելիության բարձրացման և նրա ներդրման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ մասնավորապես՝<br>առաջմղման ապահովում տեղական և միջազգային հարթակներում՝ լրագրողների և զբոսաշրջային օպե-րատորների այցելության կազմակերպում և իրակա-նացում, ներկայացում միջազգային առևտրային ցուցահանդեսներում, ֆոնդհայթայթման միջոցառում-ների կազմակերպում, www.tatev.am կայքի թարմացում | ՀԱՄՀ Տաթևի վերածնունդ ծրագրի գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| **4. Առողջապահություն** | | | | | |
| 4.1. | Ուռուցքաբանության ռադիոհիզոտո-պային հայկական կենտրոնի աշխա-տանքների պլանավորում, կազմա-կերպում և կոորդինացում՝ մասնավոր-պետական համագործակցության շրջանակներում | ուռուցքաբանության ռադիոհիզոտոպային հայկական կենտրոնի ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների պլանավորում, կազմակերպում և կոորդինացում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ, ինչպես նաև մասնավոր ներդրողների բացահայտում | ՀԱՄՀ առողջապահու-թյան գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 4.2. | Սրտաբանության ռադիոհիզոտոպային հայկական կենտրոնի ծրագրի մշակում | սրտաբանության ռադիոհիզոտոպային հայկական կենտրոնի ստեղծման ծրագիր՝<br>մասնավոր ներդրողների մասնակցությամբ | ՀԱՄՀ առողջապահու-թյան գրասենյակ | 2012 ընթացքում | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օրենքով չարգելված այլ միջոցներ |
| **5. Կրթություն** | | | | | |
| 5.1. | Նորարարական համակարգերի ներդրման միջոցով մրցունակ կրթու-թյան ծրագրի հայեցակարգի հիմնա-դրույթների մշակում՝ մասնավոր-պետական համագործակցության սկզբունքի շրջանակներում և միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | ժամանակակից, հասանելի, որակյալ և մրցունակ կրթական ծրագրի հայեցակարգի հիմնադրույթների առկայություն՝ հիմնված համակարգի ներկա իրա-վիճակի վերլուծության, միջազգային առաջատար փորձի ուսումնասիրության, շահառուների և աշխա-տանքային խմբերի ներգրավմամբ հանրային քննարկումների վրա<br>ծրագրի ներդրումն ապահովող միջոցառումների պլանավորում, կազմակերպում և իրականացում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ | ՀԱՄՀ կրթական ծրագրերի գրասենյակ | 2012թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե<br><br>օրենքով չարգելված այլ միջոցներ |
| **6. Հանրային կապեր, հաղորդակցություն և ֆոնդահայթայթում** | | | | | |
| 6.1. | ՀԱՄՀ-ի գործունեության, ծրագրերի հանրային լայն լուսաբանվածության և շահառուների հետ շարունակական հաղորդակցության ապահովում և միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | ՀԱՄՀ-ի հանրային իրազեկվածության և հանրային համագործակցության արդյունավետության բարձրա-ցում և բարենպաստ հանրային տեղեկատվական միջավայրի ապահովում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ<br>մասնավորապես՝<br>ԶԼՄ-ների ներկայացուցիչների՝ լրագրողական-ճանաչողական այցերի պլանավորում, կազմակերպում | ՀԱՄՀ հանրային կապերի և հաղորդակցության գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե<br><br>օրենքով չարգելված այլ միջոցներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | | և իրականացում<br>ՀԱՄՀ-ի Համահայկական ցանցի ծրագրի համա-տեքստում, ԶԼՄ-ներում, այդ թվում՝ Սփյուռքի, ՀԱՄՀ-ի, նրա գործունեության և ծրագրերի լուսաբանում<br>բովանդակային տեղեկատվական նյութերի մշակում, տպագրում, տարածում և լուսաբանում<br>ՀԱՄՀ-ի շահառուների հետ շարունակական հաղորդակցության ապահովում<br>ՀԱՄՀ-ի ծրագրերի ներդրումն ապահովող միջոցա-ռումների, այդ թվում՝ ֆոնդահայթայթման, պլանա-վորում, կազմակերպում և անցկացում | | | |
| 6.2 | Հայաստանի միջազգային շուկա-ներում ներկայացման բրենդի հայեցա-կարգի հիմնադրույթների մշակում և միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում, կազմակերպում և իրականացում | Հայաստանի բրենդի ձևավորմանն ուղղված միջոցա-ռումների ծրագրի հիմնադրույթների առկայություն, հիմնված ներկա իրավիճակի վերլուծության, միջազ-գային առաջատար փորձի ուսումնասիրության, շահա-ռուների և աշխատանքային խմբերի ներգրավմամբ հանրային քննարկումների վրա<br>ծրագրի ներդրումն ապահովող միջոցառումների պլանավորում, կազմակերպում և իրականացում՝ ծրագրի շահառուների ներգրավմամբ | ՀԱՄՀ հանրային կապերի և հաղորդակցության գրասենյակ | 2012 թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված այլ միջոցներ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ